

ԲԱՅԱԿԱՆ - Վ- ՄԱՍՆԻԿԻ ԶԵՎԱԲԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ՅՈՒՐԻ ԱՎԵՏԻՍՅԱՆ* 

Երևանի պետական համալսարան

-Վ- քերականական մասնիկի ուսումնասիրությունը բացառիկ կարևորություն ունի արդի հայերենի ձևաբանական և շարահյուսական համակարգերի մի շարք իրողություններ խորությամբ հասկանալու համար: Հարցին անդրադարձել են շատ քերականներ՝ մասնավորապես բայի սեռային կարգի տարատեսակ դրսևորումների կրավորական և կրավորակերպ չեզոքների, անդրադարձ և փոխադարձ չեզոք սեռի բայերի և, առհասարակ, կրկնասեռ բայերի նկարագրության առիթներով: Հարցը քննարկվել է, բնականաբար, նաև շարահյուսական մակարդակում՝ կրավորական և ներգործական կառույցների, դրանց փոխհարաբերության և նման այլ խնդիրների առնչությամբ: Մակայն սխալված չենք լինի, եթե ասենք, որ այդ մասնիկի ծագման և իմաստային-քերականական զարգացման յուրահատկությունները տակավին ամբողջական քննության նյութ չեն դարձել: Սույն հոդվածը այդպիսի մի քննություն է, որը նպատակ ունի նաև ի մի բերելու և ամբողջացնելու եղած տեսակետները:

Բանալի բառեր — բայական -վ- մասնիկը, գրաբար, միջին հայերեն, ձևաբանական զարգացում, սեռային նշանակություն, կրավորական բայեր, կրավորակերպ չեզոք, կրկնասեռ բայեր, կրավորական կառույց, երկանդամ կրավորական, եռանդամ կրավորական

-Վ- մասնիկի սեռային նշանակության ձեկավորումը հայերենում: Կրավորական -վ- ածանցով սեռային նշանակության արտահայտությունը Գուրգեն Սևակը գնահատում է հետևյալ կերպ. «Մա սեռի արտահայտման ամենակատարյալ ձևն է, որին հասել է հայերենը իր զարգացման նոր շրջանում»¹:

* **Յուրի Ավետիսյան** – բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ հայոց լեզվի ամբիոնի վարիչ

Юрий Аветисян – доктор филологических наук, профессор, заведующий кафедрой армянского языка ЕГУ

Yuri Avetisyan – Sc. D. in Philology, Professor, Head of YSU Chair of Armenian Language

Էլ. փոստ՝ yuriavetisyan@ysu.am. ORCID: <https://orcid.org/0009-0004-7475-8161>.



This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

Ստացվել է՝ 01.11.2024

Գրախոսվել է՝ 04.11.2024

Հաստատվել է՝ 06.11.2024

© The Author(s) 2024

¹ Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց (վերահրատ.), Եր., 2009, էջ 278:

Գրաբարը ներգործական և կրավորական բայերի համար չունի աշխարհաբարի նման անկախ բայեր (**գրել** և **գրվել**, **ներկել** և **ներկվել**). նույն բայի տարբեր լծորդություններով է արտահայտում սեռային տարբերակված իմաստները (**գրել** և **գրվի**, **ներկել** և **ներկվի**): Որպես կրավորական սեռի ցուցիչ՝ **-վ**- ածանցը գրաբարի բայական համակարգում դեր չի ունեցել: Ասել է թե՛ բայը գրաբարում չուներ կրավորականի արտահայտման մի ընդհանուր ձև. «**ի** կրավորակերպ խոնարհումը, նույնիսկ ոչ լիովին, կիրառելի էր միայն **ե** խոնարհման բայերի համար», իսկ **ի** խոնարհման բայերի հարցը մնում էր չլուծված, քանի որ ոչ միայն ստեղծվում էր անհարկի համանունություն (**խօսիլ-չբ** և **խօսիլ-կբ**, **ծաղկիլ-չբ** և **ծաղկիլ-կբ**), այլև անորոշ դերբայում դրանք երբեմն կարող էին հանդես գալ նաև **ե** խոնարհմամբ՝ **սայրիլ/ասարել**, **նստիլ/նստել**, **խօսիլ/խօսել**: Ակնհայտորեն առկա էր որոշակի խառնաշփոթ, և դա փոխանցվեց միջին հայերենին. միջին հայերենով գրող հեղինակները փորձեցին «կարգավորել բայական սեռի և խոնարհման կերպի՝ գրաբարից ժառանգված խառնաշփոթությունը, սակայն պատմական հանգամանքների պատճառով այդ իր ավարտին չհասավ»²: Բոլոր դեպքերում, ուսումնասիրողի վկայությամբ՝ 5-րդ դարից սկսած «ստեղծվում են նորահնար ձևեր»՝ կրավորական սեռի նշանակությունը արտահայտելու համար: Եվ վաղ միջին հայերենում նոր-նոր ձևավորվող **-ուիլ** կրավորական մասնիկի գործադրությունը ըստ էության «միակ հնարավոր ու ճիշտ ձևն է, որ հետագայում առավել ևս պարզություն մտցրեց բայի խոնարհման համակարգում»³:

Գրաբարում չունենալով լեզվական արտահայտություն՝ **-վ**- մասնիկը, սակայն, որպես հայերենի լեզվական տարր՝ գալիս է հնից գրաբարից: Սկզբնապես հանդես է եկել **-ուած** մասնիկ ունեցող բառերում (*դարձ-ուած*, *յօրին-ուած*, *հատ-ուած*, *գործ-ուած*, *սպառ-ուած*, *ստեղծ-ուած* ևն), որոնք գործածվել են գերազանցապես գոյականի («Եւ ի նմանէ գործիցին ըստ իւրում **գործուածոյ**», «Յարմարագիր ի պատմութիւնս **սասցուածի** իւրոյ», «...Երթայր **հատուածի** պատճառաւ ի կողմանս Հայոց»), ավելի ուշ՝ մասամբ նաև ածականի («Յառաջի տարածան կու լինի այս **խառնուած** դեղս», «Նոր **փռուած** վարդի նման ես» նշանակությամբ: Որոշ բառեր գործածվում են **-ք** մասնիկով («Որպէս **շինուածք** մարմնոյ այլ և այլ են...», «Զինչ **խնդրուածք** կայ կատարի») նշանակությամբ⁴:

Բայական **-վ**- ածանցը **-ուած** բաղադրյալ ածանցի **ու** մասնիկի հետ կապված լինելու բացատրությունը սկզբնապես տվել են Ա. Այտընյանը և Ս. Պալասանյանը: «Հին լեզուի կրաւորականին, — գրում է Այտընյանը, — որ ոչ միայն շատ տեղ ներգործականէն չի զանազանիր, այլ եւ շատ բայերու անկարելի է կրաւորական յարմարցընել, Ե դարու մէջ ոմանք ձեռք զարկին նորահնար ձե-

² «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, Եր., 1972, էջ 302:

³ Նույն տեղում:

⁴ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջեր 310-313, 375-376:

ւեր ստեղծելով ճար մը հոգալու, որով էլան շատ մը խորթ խոնարհմունք, (գուցէ կէս մ'ալ ժամանակին ռամկօրէնէն փոխատեալ.) — *Տուիմ, տուիս, տուի. տուիլ, տրուիլ. առնանիլ. սքանչանիլ. մոռանիլ. հեզանիլ. երկրպագիլ.* կտր. *խաբիցաք.* հրմյ. *փոխիցիր. մի՛ խաբիցուք.* եւայլն. մինչեւ միջին դարերու մեջ ծնաւ **ուիլ** ռամկ. կրաւորականը, որուն հետքը միայն ունինք հին ատեններու բայանունանց վրայ. *գործուած. դարձուած. յօրինուած. մնացուած. սպառուած.* եւայլն. թէեւ ատոնք ճշդիւ կրաւորական չեն⁵: Նոր ժամանակներում հարցին անդրադարձել են Ա. Աբրահամյանը, Ս. Անթոնյանը և ուրիշներ⁶: «Ինչպէս ցույց են տալիս բերված օրինակները, — գրում է Ա. Աբրահամյանը, — բայական այդ **ու/վ** ածանցը գալիս է մեր լեզվի պատմության վաղ ժամանակներից: Դա արտահայտվել է նախապէս հարակատար դերբայի սկզբնական ձևերի մեջ, իսկ այնուհետև քերականական կանոնների ծավալման օրենքով հետագայում տարածվել է նաև բայական մյուս ձևերի մեջ»⁷:

Այս **-վ**-ն՝ որպէս կրավորական մասնիկ, հատուկ զարգացում ունեցավ միջին հայերէնում: Որպէս կրավորական **-ուիլ, -վիլ, -իլ** վերջավորությունների մասնիկ՝ վաղ միջին հայերէնում արդէն իսկ հանդէս է գալիս կրավորական իմաստի բայաձևերում («Եկեղեցին վկայէ, որ աղէկ մարդ լինի, նա **ընդունվի**», «Եթէ եկեղեցականք լինին, նա նոյնպէս ըստ կարգի **դատվին**» (Սմբատ Գունդստաբլ)), «Եւ այս ուժս որ հակառակ է, եւ ամենայն տեղ **չի գըտընուիլ...**», «Եւ ինքն **չուտուիլ**»⁸: Ավելի ուշ (XV-XVII դարեր) հաճախակի հանդիպում է նաև կրավորական սեռի բայերի հարակատարի՝ օժանդակ բայի հետ կիրառություններում («...եւ իր ուժն Բ բնութիւնն **խառնուած է**», «...տոքայ էխպայրք **էին բաժանուած**», «Եւ այն մարդուն որ իր ստամոքն պեղծ **խառնուած կենայ**»)⁹: Ուշ միջնադարում արդէն դուրս եկավ առանձին բառերի կազմից և որպէս սեռի արտահայտիչ՝ լայն տարածում գտավ նոր գրական հայերենի ամբողջ բայական համակարգում: «Երբ արևելյան ճյուղում երկրորդ լծորդությունը վերածվեց առաջինին (*նկատի ունի ի>է լծորդական փոփոխությունը* — Յու. Ա.), արդյունքն այն եղավ, որ որոշ դեպքերում շփոթություն առաջացավ չեզոքի և ներգործականի միջև: Սրա առաջը առնելու համար այժմ էլ դիմեցին մի ուրիշ միջոցի, այն է՝ ներմուծել **-վ- (իլ-ել-վել)**.... Այս ձևափոխությունը գրական լեզվի մեջ այնքան առաջ գնաց, որ բազմաթիվ **-իլ** վերջացող բայեր դարձան **-վել**՝ առանց բանավոր պատճառի». ստեղծվեցին նույնիսկ սխալ ձևեր՝ **պարապիլ-պարապվել** (փոխ.՝ պարապել), **շվարիլ-շվարվել**

⁵ Ա. Այտընյան, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Եր., 1987, էջ 73:

⁶ Տե՛ս Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, Եր., 1953, էջ 204-212, 390-391, **նույնի**՝ Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, , Եր., 1962, էջ 619, Ս. Անթոնյան, Բայը և նրա խոնարհման համակարգը//Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. 1., Եր., 1972, էջ 302, 374-376:

⁷ Ա. Աբրահամյան, Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը, էջ 211:

⁸ Տե՛ս «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության», հ. Ա, էջ 302, 380:

⁹ Նույն տեղում, էջ 375-376:

(փոխ. շվարել) են¹⁰: Եվ արդյունքում ստացվեց այնպես, որ գրաբարի **ի** լծորդության հիմնականում չեզոք սեռի մի շարք բայեր **-վ**-ի տարածման ուժեղ ազդեցությամբ կամ համաբանությամբ սկսեցին գործածվել **-վ**-ով, ինչպես՝ *բնակիչ-բնակել-բնակվել, համարձակիչ-համարձակել-համարձակվել, խելագարիչ-խելագարել-խելագարվել, հիասթափիչ-հիասթափել-հիասթափվել, սիրահարիչ-սիրահարել-սիրահարվել, հարձակիչ-հարձակել-հարձակվել* են:

Այս զարգացումը տեղի ունեցավ գրական արևելահայերենում հավանաբար արևելահայ բարբառների ազդեցությամբ: Արևմտահայերենում այդ բայերը պահպանեցին **ի** լծորդությունը առանց **-վ**- մասնիկի՝ *համարձակիչ, բնակիչ, նմանիչ, հպատակիչ, սխալիչ, սիրահարիչ, յարձակիչ*: Այս զարգացումի ապացույց է նաև այն, որ, օրինակ, Ս. Մալխասյանցի բառարանում նշված բայերը գերազանցապես արձանագրված են նաև որպես **ե** լծորդության աններածանց բայեր՝ **տե՛ս** նշումով կամ առանց դրա, ինչպես՝ *բնակել, գրկախառնել, համարձակել, խելագարել, ուշաթափել, յարձակել, հպատակել, հիասթափել, հաշտել, օգտել*¹¹: Ստացվեց այնպես, որ արևելահայերենում գործածության մեջ մտան բայեր (*սիրահարվել, ուշաթափվել, համարձակվել* են), որոնք ծագումնաբանորեն ունեն կրավորական **-վ**- մասնիկը, որը, սակայն, կրավորականի սեռային իմաստ չի արտահայտում. այդ բայերը առանց **-վ**-ի սկզբնաձևեր չունեն: Դրանք կոչվում են **կրավորակերպ բայեր**:

Այս երևույթը շարունակվում է նաև այսօր: Դրա վառ արտահայտություններից է երկու կարևոր հանգամանք. 1. Մի քանի բայեր այսօր գործածվում են թե՛ **-վ**- ածանցով, թե՛ առանց դրա՝ երկու դեպքում էլ հանդես գալով չեզոք սեռի նշանակությամբ՝ *բռնկ(վ)ել, խուցում(վ)ել, հակառակ(վ)ել, նեղարտ(վ)ել, համաձայն(վ)ել*, 2. Մի շարք բայեր **-վ**-ի տարածվելու «հետևանքով» խոսակցական լեզվում սխալաբար գործածվում են ավելորդ **-վ**-ով՝ *ապստամբ(վ)ել, արձագանք(վ)ել, դեղն(վ)ել, գուգաղիպ(վ)ել, խաչակնք(վ)ել, ծկ(վ)ել, հոժար(վ)ել, մթազն(վ)ել, ճաքճք(վ)ել, պապակ(վ)ել, վիճ(վ)ել, տափակ(վ)ել, տվայտ(վ)ել, տուժ(վ)ել, ցնդ(վ)ել, ցամաք(վ)ել, քծն(վ)ել*¹²:

Այս բայերից պետք է տարբերել ներգործական և չեզոք սեռերի պատկանող մի շարք բայեր, որոնք ձևավորմամբ նման են կրավորակերպ բայերին, բայց սրանցում **-վ**-ն ծագումնաբանորեն բառակազմական մասնիկ է. առաջացել է **ու>վ** կամ **իու>ու>վ** փոփոխությամբ. *անպատվել, արտասվել, զգվել, երդվել, զգվել, թոթվել, թթվել, կռվել (մարտնչել), հաշվել, հովվել, հրճվել* և մի շարք այլ

¹⁰ Տե՛ս **Հ. Աճառյան**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, Բ, Եր., 1961, էջ 7-8:

¹¹ Տե՛ս **Ստ. Մալխասեանց**, Հայերեն բացատրական բառարան, հ. 1-4, Եր., 1944:

¹² *Վերաբերել* և *վերաբերվել* բայերը ժամանակի ընթացքում ձեռք են բերել իմաստային տարբերակվածություն: *Վերաբերել* նշանակում է «առնչվել, կապ ունենալ» և գործածվում է իրանիշ գոյականով արտահայտված ենթակայի հետ: *Վերաբերվել* նշանակում է «վերաբերմունք դրսևորել, վարվել» և գործածվում է միայն անձնանիշ գոյականով արտահայտված ենթակայի հետ (*Մենք բողոքս էլ ի սկզբանե ի միջի այլոց ենք վերաբերվել այդ հարցին*», բայց՝ «Այդ *հարցը* մեզ բնավ չի *վերաբերում*»):

բայերի -վ-ն ոչ թե սեռածանց է, այլ բառակազմական ածանց կամ արմատի վերջնահնչյուն. **արտասվել** (արտասու-ել), **զգվել** (զգու-ել), **երդվել** (երդու-ել<երդնուլ<երդունուլ. «բուն արմատն է **երդու**» (Հ. Աճառյան)), **թթվել** (թթու-ել), **կռվել** (<կռուել<կռիւ-ել), **հաշվել** (հաշուել<հաշիւ-ել), **պատվել** (պատուել-պատիւ-ել)¹³: **Վ**-ն սրանցում ունի բառակազմական արժեք:

Վ մասնիկը ժամանակակից հայերենի բայական համակարգում: Այն հանգամանքը, որ գրաբարում սեռային տարբերակված իմաստները նույն բայի տարբեր լծորդություններով է արտահայտվում (**գրել** և **գրիլ**, **ներկել** և **ներկիլ**), տպավորություն է ստեղծում, որ դրանք տարբեր **բառային միավորներ** են, և առիթ է ստեղծվում այսպիսի մի շատ վիճելի եզրահանգման. «ներգործական և կրավորական բայերն անկախ բառեր են»¹⁴: Արդի հայերենի բացատրական բառարանում հավանաբար այս տրամաբանության շարունակությամբ էլ միևնույն բայի -վ-ով և առանց -վ-ի ձևերը (**գրել-գրվել**, **ասել-ասվել** ևն) տրվում են առանձին գլխաբառերով (այսպես՝ **ԳՐՎԵԼ**, **կր. և չբ. Գրել-ի**)¹⁵: Կա նաև այլ կարծիք, այն է՝ դրանք նույն բառի ընդամենը տարբեր քերականական ձևերն են: Սա, մեր կարծիքով, առավել հիմնավորված է և համոզիչ. «Ժամանակակից հայերենում կրավորական սեռը արտահայտվում է հատուկ ձևույթի (մորֆեմա) միջոցով. դա -վ- ածանցն է, որը տվյալ դեպքում կրավորական սեռի համար գործադրվում է ոչ թե բառակազմական, բառաստեղծական, այլ բառափոխական, քերականական նշանակությամբ: Հենց այդ է պատճառը, որ ներգործական սեռի բայը -վ- ածանց ստանալով և կրավորական սեռի դառնալով՝ փոխում է ոչ թե իր բառական իմաստը, այլ քերականական նշանակությունը: Միանգամայն հասկանալի է, որ քերականական նշանակության փոփոխությունը չի կարող առաջ բերել բառական նոր միավորներ»¹⁶:

Կրավորական են -վ- ածանցով կազմված այն բայերը, որոնք ցույց են տալիս գործողություն, որը ենթական կրում է իր վրա: -Վ- կարող են ստանալ բոլոր կազմության բայերը, բայց միայն այն դեպքում, երբ անցողական բայ են, այսինքն՝ պահանջում են ուղիղ խնդիր լրացում: Այդ է պատճառը, որ -վ-ն համարվում է քերականական ածանց, քանի որ դրա միջոցով անցողական բայերը դառնում են անանցողական:

Արևելահայերենում այսպիսով ձևավորվել են մի խումբ բայեր, որոնք առանց -վ-ի սկզբնաձևեր չունեն, օրինակ՝ *սիրահարվել*, *ուշաթափվել*, *հիասթափվել*, *համարձակվել*, *բնակվել*, *խելագարվել* ևն: -Վ-ն սրանցում ունի բառակազմական արժեք:

Կրավորական -վ- ածանց ունեցող բայերը կրավորական սեռի բայեր են: Դրանք արդի արևելահայերենում ունեն կազմության հստակ սզկբունքներ.

¹³ Տե՛ս **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 660-661:

¹⁴ Տե՛ս **Գ. Սևակ**, նշվ. աշխ., էջ 278:

¹⁵ Տե՛ս **Էդ. Աղայան**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976:

¹⁶ **Ա. Աբրահամյան**, Բայը ժամանակակից հայերենում, գիրք I, էջ 618-619:

կազմվում են՝ **ա) Ե** լծորդության պարզ, բազմապատկական և **-ն**- ածանց ունեցող բայերի ներկայի հիմքից՝ **երգել-երգ-վ-ել, կոտրատել-կոտրատ-վ-ել, հագնել-հագն-վ-ել, բ) ա** լծորդության պարզ և **-ան**-, **-են**- ներածանցավոր բայերի անցյալի հիմքից՝ **խաղալ-խաղաց-վ-ել, մատանալ-մոռաց-վ-ել, բարձրանալ-բարձարց-վ-ել, գ) պատճառական** բայերի սկզբնատիպ ձևերի ցոյական հիմքից՝ **մոտեցնել-մոտեց-վ-ել, հիշեցնել-հիշեց-վ-ել**. նույնանում են **բ** կետում նշված կազմության բայերի կրավորականներին՝ **խաղալ-խաղացվել** և **խաղացնել-խաղացվել, մոտենալ-մոտեցվել** և **մոտեցնել-մոտեցվել, դ) որոշ անկանոն** բայերի (անել, դնել, տանել) անցյալ կատարյալի հիմքից՝ **ան**-ել > *ար*-վ-ել, **դն**-ել > *դր*-վ-ել, **տան**-ել > *տար*-վ-ել: Բացառություն կարելի է համարել նաև **բաց թողնել** բայը, որի՝ կատարյալի հիմքից կազմված *բաց թողել, բաց թողած* ձևերը նախընտրելի են ներկայի հիմքից կազմված *բաց թողնվել, բաց թողնված* տարբերակից (Լրացնել **բաց թողնված** տառերը>Լրացնել **բաց թողած** տառերը):

Կրավորական ածանցով բոլոր բայերը **ե** լծորդության են և խոնարհվում են **Ե** լծորդության աններածանց բայերի նման:

Կրավորական սեռը ձևով և իմաստով հակադրվում է ներգործականին: Սակայն, ինչպես գիտենք, կան ներգործական սեռի բայեր, որոնք **-վ-** կրավորական մասնիկ չեն կարող ստանալ՝ *սովորել, ունեն, երդվել, գիտեն, խանդել* են:

Կրավորական սեռի բայերով կազմված նախադասությունը կրավորական կառուցվածքի է: Ներգործական և համապատասխան կրավորական կառուցվածքի նախադասությունները շարահյուսական շրջապատում հոմանիշներ են: Եվ ինչպես բառային հոմանիշները, սրանք նույնպես լրիվ նույնական չեն: Ունեն նրբիմաստային և գործառական տարբերություններ, հակառակ դեպքում չէին կարող տևական ժամանակ կողք կողքի գոյություն ունենալ: Իմաստային հիմնական տարբերությունն այն է, որ կրավորական կառուցվածքի նախադասության մեջ ընդգծվում է գործողության գաղափարը, և իջեցվում է գործողություն կատարողի դերը: Այսինքն՝ եթե լեզվակիրառողը ցանկանում է ընդգծել գործողությունը կրելու գաղափարը և երկրորդ պլան մղել իրականում գործող կամ եղող առարկան, դիմում է կրավորական կառույցի գործածությանը: Այսպես՝ «**Պատգամավորները** հարցը քննարկեցին ազգային ժողովում» և «Հարցը **քննարկվեց** ազգային ժողովում (պատգամավորների կողմից)»: այս երկու տարբերակներից երկրորդում ակնհայտորեն ընդգծվում է գործողության գաղափարը, և երկրորդ պլան է մղվում այն, թե ով է կատարել գործողությունը:

Կրավորական կառույցի գործածությունը ունի նաև մեկ այլ միտում, այն է՝ «քողարկել, թաքցնել» գործողություն կատարողին: Եվ կրավորական կառույցների քիչ գործածությունը հայերենում պետք է բացատրել ոչ թե դրա՝ հայերենին խորթ լինելու հանգամանքով, ինչպես երբեմն արվում է (դրանք քիչ են գործածվում նաև այլ լեզուներում), այլ կառույցի իմաստային նշված յուրա-

հատկություններով: Եվ վերջապես, կրավորական կառույցի նախադասությունները գործառական տարբեր ռճերում գործածական տարբեր հաճախականություն ունեն. կրավորական նախադասությունները ավելի հաճախ են գործածվում պաշտոնական գրագրության և գիտական գրականության մեջ, ինչպես նաև լրատվական որոշակի ժանրերում (լուրի գրառում, ռեպորտաժ նն). քիչ են հանդիպում գեղարվեստական տեքստերում:

Եթե կրավորական կառույցում առկա է ներգործող խնդիր, ապա կառույցը կոչվում է **եռանդամ կրավորական** (ենթակա+ստորոգյալ+ներգործող խնդիր). «Թշնամին պարտության մատնվեց մեր բանակից»: Անկախ այն բանից՝ կրավորական կառույցում ներգործող խնդիրը կա թե չէ, կրավորական ածանցով բայերը դիտվում են որպես կրավորական սեռի. ենթական հանդես է գալիս մի ուրիշ առարկայի գործողությունը կրողի դերում՝ «Դաշտի քարերը վաղուց են **հավաքված**», «Ապրանքը **առաքվել է**»: Այս տիպի կառույցները (ներգործող խնդիրը արտահայտված չէ, ենթադրվում է, սպասվում է) կոչվում են **երկանդամ կրավորական** (կրող ենթակա+կրավորական սեռի բայով արտահայտված ստորոգյալ): Իսկ եթե ներգործող խնդիրը չկա և չի էլ ենթադրվում, ապա բայը չեզոք սեռի է: Հմմտ.՝ «Օրենքը **ընդունվել է** ՀՀ Ազգային ժողովում» կամ «Քրգործը **ընդունվեց** վարույթ» (երկանդամ կրավորական); «Երիտասարդը **չընդունվեց** համալսարան» կամ «Նա գերի **հանձնվեց**» (չեզոք); «Օրենքը **ընդունվել է** ՀՀ Ազգային ժողովի կողմից», «Գործը **հանձնվեց** Վճռաբեկ դատարան **բողոքարկողների կողմից**» (եռանդամ կրավորական): Ըստ վիճակագրության՝ երկանդամ կրավորական կառույցները շատ ավելի գործածական են, քան եռանդամ կրավորականները: Պատճառը կրավորական կառույցի յուրահատկությունն է. նվազեցնել բայով արտահայտված գործողություն կատարողի դերը:

Կրավորական **-վ-** մասնիկ ունեցող բայերի մի մասը գործածվում է **միայն որպես կրավորական՝ առանձնացվել, անհծվել, առաքվել, արհամարհվել, արտադրվել, աքսորվել, բերվել, բարձրացվել, բնութագրվել, գծվել, զովարնանվել, գործադրվել, երգվել, ծաղրվել, կալանավորվել, հերքվել, հրավիրվել, սիրվել, ուղարկվել, փայլեցվել** նն: Սրանց ներգործող խնդիրը սպասվում է կամ ենթադրվում է. «Համակարգիչը **բերվեց** (ո՞ւմ կողմից)», «Կարմիր վարդերը **առանձնացվեցին** (ո՞ւմ կողմից)», «Նախագիծը վաղուց **գծվել է**» (ո՞ւմ կողմից):

Մյուս մասը կարող է գործածվել և՛ որպես կրավորական, և՛ որպես չեզոք՝ **ազատվել, այրվել, անջատվել, բաժանվել, բացվել, բուժվել, դաստիարակվել, թեքվել, կծկվել, հաստատվել, մարզվել, նեղվել, նկարվել, շարժվել, պատրաստվել, սկսվել, վառվել, քննարկվել, օրորվել** նն: Սրանք կրկնասեռ բայեր են, ինչպես՝ «Փոքրիկը լավ **մարզվել էր** մարզիչի կողմից և անօրինակ հմտությունների էր տիրապետում» (կբ) և «Նա սիրում է ինքնուրույն **մարզվել**» (չբ); «Սեղանը **պատրաստվեց** շատ արագ և որակով» (կբ) և «Մենք **պատրաստվում ենք** հերթական օլիմպիական խաղերին» (չբ):

Չեզոք սեռի իմաստով է գործածվում կրավորական սեռի բայերի մեծագույն մասը: Ինչպե՞ս կողմնորոշվել այդ գործածություններում:

1. Կրավորական կառուցվածքը հնարավոր է փոխակերպել ներգործականի՝ *Տերևը պոկվեց քամուց (կբ)* → *Քամին պոկեց տերևը*: Բայց՝ *Տերևը պոկվեց ճյուղից (չբ)*; *Մկսած գործն ավարտվեց մեր կողմից (կբ)* → *Մենք ավարտեցինք սկսած գործը*: Բայց՝ *Ներկայացումն ավարտվեց ուշ երեկոյան (չբ)*; *Ձորը լցվեց ծաղիկներով (կբ)* → *Ծաղիկները լցրին ձորը*: Բայց՝ *Ձուրը թափով լցվեց ձորը (չբ)*; *Մյգու փոքրիկ դռնակը դանդաղ շարժվեց քամուց (կբ)* → *Քամին դանդաղ շարժեց այգու փոքրիկ դռնակը*: Բայց՝ *Քարավանը շարժվեց դեպի հեռվում երևացող օազիսը (չբ)*:

2. Կրավորական սեռի բայերը ունենում են ներգործող խնդիր, որը ստանում է **ուսի՞ց, ինչի՞ց, ո՞ւմ կողմից** կամ **ինչո՞վ** հարցը. «Աթոռը **պատրաստվեց** (վարպետի կողմից)» (ո՞ւմ կողմից) (կբ) և «Նա **պատրաստվեց** ելույթի» (չբ); «Պանիրը **փաթաթվեց** թարմ լավաշով և **մատուցվեց** զբոսաշրջիկներին» (սպասուհու կողմից) (ո՞ւմ կողմից) (կբ) և «Երեխան **փաթաթվեց** վերմակով» (չբ); «Քարերը **կուտակվեցին** իրար գլխի» (ո՞ւմ կողմից) (կբ) և «Մարդիկ **կուտակվեցին** իրար գլխի» (չբ):

3. Կրավորական սեռի բայով արտահայտված ստորոգյալը պատասխանում է **ի՞նչ է արվում, ի՞նչ է արվելու, ի՞նչ արվեց** և նման հարցերի. չեզոք սեռի դեպքում հարցի մեջ կրավորական մասնիկը չկա. «Մենք **հավաքվեցինք** տանը» (ի՞նչ արեցինք) (չբ) / «Ծաղիկները **հավաքվեցին** պարտեզից» (ի՞նչ արվեցին)(կբ):

Երբեմն, օրինակ, չեզոք սեռի բայերի անջատման խնդիրը ձևով (բացառական հոլովով) շփոթվում է ներգործող խնդրի հետ: Տարբերությունն այն է, որ ներգործող խնդրի ստորոգյալը միայն կրավորական բայ է լինում: Եթե բայն էլ սեռով (ձևականորեն) համընկնում է, ապա պետք է հիշել, որ բայը ներգործական դարձնելիս ներգործող խնդիրը փոխվում է ուղղական հոլովի՝ դառնալով ենթակա, իսկ անջատման խնդիրը մնում է նույնը (հմմտ.՝ «Հեծանիվի **անիվը կմախքից (անջ. խնդիր)** պոկվել էր **վարպետի կողմից**» <=> «**Վարպետը կմախքից (անջ. խնդիր)** պոկել էր հեծանիվի **անիվը**»):

Առանձին դեպքերում, ի վերջո, դժվար է միանշանակ պնդել՝ գործ ունենք պատճառի պարագայի՞, թե՞ ներգործող խնդրի հետ, հմմտ.՝ «Հակոբը կծկվեց **ցավից**» (պտճ. պ.), «Հակոբը նեղվեց **ընկերոջից**» (ներգ. խ.), «Հակոբը նեղվեց **ընկերոջ խոսքերից**» (պտճ. պ./ներգ. խ., բայց ավելի զգալի է պատճառի պարագայական նշանակությունը):

Եզրակացություն: Բայական **-վ-** մասնիկը ծագել է գրաբարյան **-ուած (-ված)** ածանցից, որով հին հայերենում կազմվել են գոյականներն ածականներ: Միջին հայերենում լայնորեն տարածվել է՝ ձեռք բերելով կրավորական սեռի նշանակություն: Արդի հայերենում այն կրավորական սեռի արտահայտման միակցուցիչն է: Կրավորական **-վ-** մասնիկով բայերը հայերենի շարահյուսական

մակարդակում ձևավորում են կրավորական կառույցներ, որոնք իմաստային-գործառական և ոճական յուրահատուկ կիրառություններ ունեն գործառական տարրեր ոճերում:

ЮРИЙ АВETИСЯН – Морфологическое развитие частицы -վ- в армянском языке. – Изучение грамматической частицы **-վ-** имеет исключительное значение для глубокого понимания ряда реалий морфологической и синтаксической системы современного армянского языка. Профессор Гурген Севак оценивает выражение значения рода с помощью суффикса **-վ-** следующим образом: «Это самый совершенный способ выражения рода, которого достиг армянский язык в новом периоде своего развития». Однако особенности происхождения и семантико-грамматического развития этой частицы нами до конца не изучены. В данной статье рассматриваются эти вопросы. Глагольная частица **-վ-** образована от существительных и прилагательных, образованных суффиксом **-ուած (-ված)**. Это широко распространилось в среднеармянском языке, приобретя значение пассивного рода. В современном армянском языке это единственный и достоверный показатель выражения пассивного рода. На синтаксическом уровне армянского языка глаголы с пассивной частицей **-վ-** образуют биномиальные (пассивное подлежащее + сказуемое, выраженное глаголом пассивного рода) и трехчленные (подлежащее + сказуемое + воздействующее дополнение) пассивные структуры, обладающие уникальными семантико-функциональными и стилистическими применениями в различных функциональных стилях. Также в статье рассматриваются двухродовые характеристики некоторой части пассивных глаголов в речевой среде и принципы их отличия от глаголов нейтрального рода.

Ключевые слова – глагольная частица **-վ-**, *грабар*, среднеармянский язык, морфологическое развитие, родовое значение, пассивные глаголы, пассивообразный нейтральный, двухродовые глаголы, пассивная структура, биномиальный пассив, трехчленный пассив

YURI AVETISYAN – Morphological Development of the Particle -վ- in the Armenian Language. – The study of the grammatical particle **-վ-** is of exceptional importance for a deep understanding of a number of realities of the morphological and syntactic system of the modern Armenian language. Professor Gurgen Sevak evaluates the expression of voice using the suffix **-վ-** as follows: “This is the most perfect way of expressing voice that the Armenian language has achieved in the new period of its development.” However, we have not fully studied the features of the origin and semantic-grammatical development of this particle. This article addresses these issues. The verb particle **-վ-** is formed from nouns and adjectives formed by the suffix **-ուած (-ված)**. This spread widely in the Middle Armenian language, acquiring the meaning of the passive voice. In modern Armenian, this is the only and reliable indicator of the expression of the passive voice. At the syntactic level of the Armenian language, verbs with the passive particle **-վ-** form binomial (passive subject + predicate, expressed by a passive verb) and trinomial (subject + predicate + influencing object) passive structures that have unique semantic-functional and stylistic applications in various functional styles. The article also discusses the bigender characteristics of some of the passive verbs in the speech environment and the principles of their difference from verbs of a neutral gender.

Key words: *verbal particle -վ-, grabar, Middle Armenian language, morphological development, voice meaning, passive verbs, passive-neutral, double voiced-verbs, passive structure, binomial passive, trinomial passive*